

անձնատուր եղեր էր յուսահատելով եւ հաւատալով նորա երդմանցը, որ եղբօրը տեղ կը խոստանար գինքն իշխան կացուցանել Վասպուրականի:

Քաջութիւն, վատութիւն, մատնութիւն եւ յիմար վստահութիւն այնպիսի խառնաշփոթ ազդեցութիւն կ'ընէին խեղճ մարդուն գլխուն, որ հայ նախարարեանը արհամարհել իրեն սովորութիւն ըրած էր, բայց իւր անխօս բնութիւնը կ'օգնէր իրեն եւ ժողովրդեան առջեւ չէր ուզէր յայտնել իւր մտածութիւնը, ուստի կը համբերէր: Երբ իմացուցին իրեն, թէ Բուղայ վերցուց բանակը եւ ելաւ ի Խլաթայ երթալու ձմեռելու Դուին, ինքն էլ պատրաստութիւն տեսաւ իրեն հետեւելու եւ երթալու Խլաթ իր առաջադրութիւնը ի գլուխ հանելու:

Խլաթ այն ժամանակ Վասպուրականի գեղեցիկ մէկ քաղաքն էր. ծառախիտ պարտեզներէ շրջապատ եալ, իւր պտուղները միշտ անուշահամ, միշտ գեղեցիկ, հոգակաւոր էր բոլոր Հայաստան. իւր դիրքը Վանայ ծովուն վրայ էր տարածեալ վերուստ ի վայր, իւր ամուր բերդը, աշտարակոք ամրացեալ, եկեղեցիներուն գմբէթները բարձրաբերձ, վաճառանոցներն հարուստ, դարձեալ նոյն վայրկեանին երբ ամբողջ Հայաստան ոտնակոխ կը լինէր, նա միայն նիւթական կորուստ չունենալով, բացի մայր եկեղեցունոյն, որ մզկիթ էր դարձեր, չէն եւ փարթամ կերպարանք ունէր. տաճիկը Տարօնս եւ Վասպուրականի աւարը հոն էր լցուցեր, եւ առեւտուրը լաւ վիճակի մէջ էր: Ուստի երբ բանակը վերցուց Բուղայ Դուին երթալու, բնակիչքը շատ գոհ չեղան, ոչ միայն որ մեծ բռնաւորին եւ զօրաց հեռանալով առեւտուրը պիտի պակսէր, այլ, մանաւանդ որ նորա հեռանալով անհամար փոքրիկ բռնաւորք մէջտեղ պիտի ելնէին ինչպէս միշտ սովորութիւն է, եւ այս՝ փորձով գիտէին խլաթեցիք. ուստի քանի որ զօրաց թիւը կը պակսէր վաճառական մարդն էլ իւր կրպակը կանուխ կը գոցեր եւ իր պարտեզներու մէջ ծածկուած տունը կը հեռանար:

Ինչպէս սովորութիւն եղած է միշտ արեւելքի մէջ, թագաւոր կամ զօրավար երբ կելնէ ճանապարհ, նշան է երթալու ամենուն, այնպէս